

կազատէ, պատրաստ շոր ունենալով կամաւոր զինւոր է դարձել :

— Ա՞յլ է արդեօք յիշում այն զինւորին, որ հազիւ հազ երկաթուղու գնացքին հասաւ . . .

Սա էր իմ առաջին հարցը ինձ պատահող մտրդին: Սա պահապանն էր, որը ինձ խսկոյն կայարանի գանձապահի մօտ տարաւ: Մի և նոյն հարցը առաջարկեցի նորան ևս և հաստատ պատասխան ստացայ: Նորա ուշադրութիւնը դարձած էր առանձնապէս այդ մարդի վերայ, որովհետեւ մեքենայի գնալուց առաջ վերջին վայրկեանին նշանաւոր գումար ներկայացնելով, մնացորդ էր պահանջում:

— Տոմսակը դէպի ո՞ր կողմ գնալու առաւ, — հարցրի ես:

— Բրիտտօլ գնալու — պատասխանեց նա:

— Այն մարդը մարդասպան է և նորան հարկաւոր է բռնել, ասացի ես: Շուտով Բաթ հեռագրեցէք: Հեռագիրը աւելի շուտ կերթայ քան թէ երկաթուղին, և նորան կարող են բռնել:

Ահա այս կերպով զարհուրելի գործը վերջացած էր: Մարդասպանին Բաթում բռնեցին, և խուզարկութենից յետոյ նորա մօտ գտան, բացի ծախսած գումարից 100 ֆունտ ստերլինգ: Ամեն կողմից ապացոյցները ակներև էին: Խեղճ միստէր Իրվինի զին գտան անտառում: Ճանապարհը ես ինքս ցոյց տուի: Յետոյ լճի ափը գնացի թիթեռնիկների ցանցիկը գտնելու: Գաւազանի մի ծայրը ջրից դուրս էր ցցվել, իսկ միւս ծայրը երկաթէ օղակով լինելով ջրի մէջ էր ընկղմած:

Ահաների պակասութիւնն չկար: Իմ նորա դէմ վկայութիւնը անվիճելի էր: Շատ փորձեր եղան իմ ասածս հերքելու և ապացուցանելու, որ իբրև թէ ես կարող էի սխալվել, և թէ անկարելի է որ հեռագրիտակով այնքան հեռուից այդքան մանրամասնաբար զիտէի: Շատ ապակէգործեր կանչվեցան և շատ փորձեր արին: Ապացոյցներից ակներև եղաւ, որ ես կարող էի ամենայն բան տեսնել, ինչ որ իմ ցուցմունքով յայտնած էի: Եւ թէպէտ սորանից շատ վէճեր դուրս եկան և շատ լրագիրներ իւրեանց ձոյներ բարձրացրին ապացուցանելով որ մի անգործ և դատարկաշրջիկ մարդի համար կարելի չէ մի անձն զո՞ք բերել, որը պարապութենից սկսումէ հեռագրիտակով զանազան կողմեր նայել: Սակայն դատաւորները ամբաստանված Աւիլիամ Մաէսօնին դատապարտեցին կախաղան հանելու:

Ընթերցողներին հաճելի կլինի ի հարկէ իմանալ, որ Խեղճ այրի կինը որը անմեղաբար այս զարհուրելի եղեանագործութեան պատճառն էր եղած ստացաւ իւր 100 ֆունտ ստերլինգը թէպէտ ոչ Զէմս Իրվինի ձեռից:

(Թարգմ.)

Ճէմ. Գ. Դաս. ար. Մ. Գ.

ԲԱԳՐԵՒԱՆԴՅԻ ՀԱՅԻ ՎԻՇՏ:

Ամեն օր նոր ցաւ, վիշտեր դառնագին
Տիրումեն Հայի սրտի խորքերին.

Յաճախ և անդուժ հարուած տեղացաւ,

Դեռ կոտորվելուց Հայն շսպառեցաւ,

Մի՞ թէ օտարն ինձ գուժ կուեննայ,

Երբ իմ եղբայրը մնումէ անզգայ.

Հալածվումէ՞մ ես իմ բընիկ երկրից,

Թափվումէ անխնայ արիւնըս կուրծքից,

Չախորդ դէպքերի ձեռից տարադէմ

Օտար երկիրներ անյոյս շրջումէմ.

Իմ տուն, զաւակներս զո՛հ եղան մահին.

Ո՞վ կողորմի արդեօք խեղճ Հային,

Եթէ մարդիկն են դէպ ինձ անարդար,

Գոնէ երկիրքը ինձ շղայրանար.

Սոված և մաշված այս և այն դոնում

Ուտելու հացի փլջրանք եմ պըտուում

Երբ Հայը Հային հարուած դառնագին

Տալիս է անխնայ, չէ նայում խըղճին,

Երբ անտեղեակ է և կեղծաւորին,

Մեղադիր կլինիս սոսկ լեռնականի՞ն,

Ճանաչիր կանխաւ ճիշտ բուն աղբիւրը,

Հետազօտիր լաւ քո բոլոր տունը,

Տես թէ Հային ի՞նչ ձըգեց անգունըր. —

Ի՞նչի շենք տեսնում մեր թերութիւնը,

Բաւ է, ով Հայեր, բաւ է այս չափը,

Ուխտներ նորոգել մեր թշուառ կեանքը.

Անըզգայութիւն և վատթարութիւն

Արմատից կխլէ անտէր Հայի տուն:

Չար կամք, չար լեզու հաննէք մեր սրտից,

Միանա՛նք, ելբայր, յետոյ երկնքից

Միութեան Հայրը կդառնայ առ մեզ,

Ստայ մահի տեղ կեանքի ասպարէզ:

Ճէ՛մ. Դ. Դոստ. աշ. Ն. Պ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Այս անգամ «Արարատի» ընթերցողները փետրվարի և մարտի տետրա-
կը միացած պիտի ստանան, Բացի ուշացած ժամանակը շահելուց, սա մեզ
միջոց տուաւ յօգուածներն աւելի հարստացնելու, որոնց ընտրութեան մա-
սին, կյուսանք ընթերցողները գոհ պիտի լինին.

Փետրվար ամսի 19-ին Ն. Վ. Մ. Ալէքսանյը Բի. քսաննահամակը,